ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 02 2025 թ.
№ ՊԱՇՊ-գգգ-144

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ (ՀՎՀՀ 01505177)
ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 48/2
Էլ.փոստի հասցե՝ astghik59@gmail.com
Հեռ.՝ +374 10 726 726

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի միջև 17.04.2024թ. կնքված N ՄԱԾՁԲ-24-8-19 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2024թ. 2-րդ եռամսյակում մատուցված տպագրական ծառայությունների արդյունքում մատակարարել ապրանքներ, սակայն վերոնշյալ պայմանագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ, 38-րդ, 39-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ և 54-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ամբողջությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը **13.02.2025թ.-ին** միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը վերոնշյալ չափաբաժինների մասով:

Տեղեկացնում ենք, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***112 445 ՀՀ դրամ***՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն) և ***8 854 ՀՀ դրամ***՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետերի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.12.2024թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Տեղեկացնում եմ նաև, որ հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ